

“ԴԱՄԱԿԱՆ”

Բնակելի կամ բիզնես անշարժ գույքի ձեռք բերման համար տրամադրվող վարկ (առաջնային և երկրորդային շուկա)

Նպատակային նշանակությունը	Առաջնային կամ երկրորդային շուկայում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման համար տրամադրվող վարկ:		
Հնարավոր վարկառուները	Կայուն եկամուտ ունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:		
Վարկի նվազագույն և առավելագույն գումարը	A	B	C
	10,000 - 150,000 ԱՄՆ դոլար	10,000 - 50,000 ԱՄՆ դոլար	10,000 - 25,000 ԱՄՆ դոլար
Վարկի արժույթը	ԱՄՆ դոլար Արտարժույթով տրամադրված վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:		
Վարկի նվազագույն և առավելագույն ժամկետը	A	B	C
	120 - 240 ամիս ԱՄՆ դոլարի դեպքում	84 - 120 ամիս ԱՄՆ դոլարի դեպքում	84 ամիս ԱՄՆ դոլարի դեպքում
	84 - 120 ամիս ՀՀ դրամի դեպքում	84 - 120 ամիս ՀՀ դրամի դեպքում	84 ամիս ՀՀ դրամի դեպքում
Նվազագույն կանխավճարը	A	B	C
	30%	40%	50%
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը	A	B	C
	10.7% ԱՄՆ դոլարի դեպքում	11.2% ԱՄՆ դոլարի դեպքում	11.7% ԱՄՆ դոլարի դեպքում
	14% ՀՀ դրամի դեպքում		
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը	A	B	C
	11.43% -12.43% ԱՄՆ դոլարի դեպքում	12.19%-13.41% ԱՄՆ դոլարի դեպքում	13.07%-13.98% ԱՄՆ դոլարի դեպքում
	15.28%-16.65% ՀՀ դրամի դեպքում	15.37%-16.65% ՀՀ դրամի դեպքում	15.69%-16.65% ՀՀ դրամի դեպքում
<p>Ուշադրություն՝ վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում եւ չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող էք գտնել այստեղ: Վարկային պայմանագրի գործողության ընթացքում Բանկի կողմից անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում, եթե վարկառուն չի խախտում պայմանագրով սահմանված պայմանները:</p>			

Ուշադրություն՝ Այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել բանկի կողմից վարկային պայմանագրի գործողության ընթացքում, եթե վարկառուն խախտի պայմանագրով սահմանված պայմանները:

Փոփոխման սահմանաչափերն են՝ 1-5%

Պարտադիր վճարման ենթակա վճարներ	Միջնորդավճար՝ 105000-755000 (այդ թվում՝ վարկի տրամադրման համար՝ վարկի գումարի 1.5%-ը, բայց ոչ պակաս քան 100.000 ՀՀ դրամը, վարկային հայտի ուսումնասիրման համար՝ 5 000 ՀՀ դրամ:)	
Վարկ գրավ հարաբերակցություն	70%	
Վարկի տրամադրման կարգը	Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:	
Վարկի մարման կարգը	ամենամսյա հավասարաչափ մարումներով, ամենամսյա անուիտետային մարումներով: Տոկոսագումարը հաշվարկվում է նվազող մնացորդի նկատմամբ:	
Վաղաժամկետ մարման հնարավորությունը	Թույլատրվում է առանց տույժերի:	
Տույժերը	Ժամկետանց վարկ	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով:
	Ժամկետանց տոկոս	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով:
<i>Զգուշացում՝ Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր տոկոսագումարների և վարկի գումարների մարումները:</i>		
<i>Ուշադրություն՝ Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու համար:</i>		
<i>Վարկային պարտավորությունների չկատարման եւ գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում, վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու պարագայում, հնարավոր է պատավորությունների մարում վարկառուի այլ գույքի հաշվին:</i>		
Ապահովվածությունը	Գրավ	Ձեռք բերվող անշարժ գույքը:
	Երրորդ անձի երաշխավորություն	Չի հանդիսանում պարտադիր՝ նպատակահարմարությունը որոշում է Բանկը:
Ձեռքբերվող գույքը գնահատվում և ապահովագրվում է Բանկի հետ համագործակցող		

ընկերություններից որևէ մեկի կողմից [/ցանկը տես այստեղ/](#):

Օժանդակ ծառայություններից օգտվելու գնային միջակայքը հետևյալն է՝

- գույքի գնահատում՝ 15.000 ՀՀ դրամ
- գույքի ապահովագրություն՝ 0.22% գնահատված արժեքից կամ վարկի գումարից /հաճախորդի ցանկությամբ/
- անձնական ապահովագրություն՝ 0.17% վարկի գումարից
- նոտարական ծառայությունների վճար՝ 15 000- 20 000, ներառյալ ամուսնության վերաբերյալ հայտարարությունների համաձայնագրերը
- գույքի պետական գրանցման վճար՝ 26 400- 172 500 ՀՀ դրամ

*Չեն ներառվում վարկի փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

Գրավի գնահատումը	Պարտադիր, լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից: Իրականացվում է վարկառուի միջոցով:	
-------------------------	--	--

Ապահովագրությունը	Գույքային	պարտադիր
	Անձնական	պարտադիր

Գրավին ներկայացվող պահանջները	<p>1. Բնակարան</p> <p>Բնակարանը պետք է ունենա բարձր լիկվիդայնություն (ավարտված նորակառույց կամ բարձր լիկվիդայնություն ունեցող ռեզիդն Երևանում, ցանկալի է վերանորոգված): Վարկերը չեն տրամադրվում բարձր մաշվածության աստիճան ունեցող շենքերում բանակարան գնելու համար:</p> <p>2. Բնակելի տուն</p> <p>Բնակելի տունը պետք է ունենա առանձնացված մուտք և հողակտոր: Բնակելի տունը չպետք է ունենա ընդհանուր պատեր հարևան տների հետ, մակերեսը պետք է լինի նվազագույնը 100 քմ:</p>
--------------------------------------	--

Սպառողի համար վարկի հասանելիությունը սահմանափակող այլ պայմաններ չկան: Վարկը ձևակերպվում է բանկում՝ մասնաճյուղերում:

Վարկի տրամադրման դրական գործոններն են հաճախորդի վարկունակությունը, դրական վարկային պատմության առկայությունը, գրավի առարկայի որակը և այլն:

Վարկի մերժման գործոններն են հաճախորդի եկամուտների անբավարար լինելը, բացասական վարկային պատմության առկայությունը, ներկայացված տեղեկատվության կամ փաստաթղթային փաթեթի թերի կամ անարժանահավատ լինելը և այլն:

Պայմանագրի գործողության ընթացքում քաղվացքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները տես [«Սակագներ»](#) բաժնում: